

1910ին ինձ համար արտագրեց Տէր Տաճատ Բահանայ Բաշայեան եւ իր ճարտար գեղարութեամբն ալ հաճեցաւ նմանահանել զայն .

«Փա՛ռք եւ գոհութիւն եւ երկրպագութիւն պաշտելի. եւ երկրպագելի. զուտ հաւատար սուրբ Երրորդութեան հօր եւ որդոյ եւ սուրբ հօգոյն յաւիտեանս յաւիտեանց ամէն :

Գրեցա՛ւ եւ ծաղկեցաւ. աստուածարուզ եւ սուրբ ասեւորանս Գրիստոսի ի բաղաքն Կոստանդնուպոլիս . յուսկուրտարն ի դուռն սուրբ Խաչն եկեղեցին . թվին . ՌՃԼԹ . եւ ցանկացող եղև ամա՛ հոգեւէր եւ բարեմիտ Ահնջի յունանին սեղրոսին կողակցին հօրիսիմային հարն մուրատին . մօրն թոսուխին . տէլլէթին մաղանսի . եւ ըստացաւ զսա՛ ի հալալ ընչեց իւրոց . եւ եզ ի դուռն ի սուրբ խաչն եկեղեցի յիշատակ իւր եւ ծնօղացն իւրոց . ահնջի յունանին սեղրոսին . կողակցին հօրիսիմային . հօրն մուրատին մօրն թոսուխին . մաղանսի տօլլէթին . եւ այլ ամենայն արեան մերձաւորացն . եւ այլ ոչ ոք չունի իշխանութիւն : հանել ի դրանէ սորա՛ ծախելով . եւ կամ գրաւելով . եւ կամ այլ ինչ իւր . եւ եթէ ոք յանդգնի . զմասն յուզայի եւ զանչձան կայիի առցէ . Արդ աղաչեմ զձեզ եղբարք ո՛րք հանդիպիք . ի սմայ կարդալով . եւ կամ յարեանեկելով . յիշեալիք . եւ կամ հարեանցի տեսանելով . յիշեալիք միով աստուած ողորմիայի եւ լի բերանով ողորմի աստուած սղորմի ասէք տէր մեր յիսուս քրիստոս սղորմեացի ձեզ յիւր միւսանգամ զալըստեան յիշէք աստուած զձեզ յիւր յիշէ որ է օրհնեալ յաւիտեանս ամէն : Հա՛յր մեր որ յերկինս :

Այս Յիշատակարանէն կ'իմանանք՝ թէ եկեղեցին գոյ էր 1690ին, բայց կը ներեմ ինձ յայտնել այս առթիւ, թէ շա՛տ անբնական կը գտնեմ Տէր Հմայեակ Բահանայ էքսէրձեանի այն առարկութիւնը⁷², թէ Յիշատակարանին ՌՃԼԹ թուականին վերջի «Թ» գերբ քիչ մը հեռուն դրուած ըլլալուն, կը նշանակէ «Քուական» բառը եւ ո՛չ թէ 9(ինը) : Դիտելի է որ արդէն «Քվիլի»ը նախապէս ամբողջովին գրուելէ յետոյ անմիջապէս՝ քիչ մը անդին համառոտագիր մենիկ «Թ» չէր կրնար կրկնուիլ . Ս. Խաչի Աւետարանին գրչութեան ճիշդ թուականն է՝ ՌՃԼԹ = 1690, որով՝ անտեղի է Ս. Խաչի Հիմնարկէքը 1684էն առաջ տանիլ⁷³. Նաեւ ուշադիր ըլլալու ենք, թէ՛ Յիշատակարանին մէջ միայն «Թ» տառը չէ որ հեռակայ դրուած է, այլ շա՛տ տողերու վերջը կը տեսնենք հեռուն տարուած տառեր, պարզապէս՝ Յիշատակարանին բոլոր տողերը ու գիւղ գիծի մը վրայ շարակարգելու համար :

⁷² Ժամանակ, Կ. Պոլսոյ, 29 Սեպտեմբեր 1927 :
⁷³ Այս Աւետարանին ճիշդ ու ճիշդ նման մէկ ձեւագիրը կը գտնուի եղև Եիւ Նորքի գրադարանին մէջ, ինչպէս կ'իմացնէր Յ. Քիւրտեան 1928ին «Հանդէս Ամսօրեայ»ի նոյն տարւոյն Սեպտեմբ.-Նոյեմբ. թիւին մէջ :

Իրաւ է թէ Տէր Աբրահամ ամէն հնարք (ներելի խաբէութիւն!!) ի գործ դրած է, որպէս զի հաւտացնել տայ, թէ «Ս. Խաչ» անունով եկեղեցի մը ի հնուց գոյութիւն ունեցած է, շինութեան արտօնութիւնը ձեռք բերել կարենալու համար, բան մը որ ամենագիտութիւնը եւ գրեթէ անհնարին էր այդ դարուն, եւ զիտենք՝ թէ քանի՛ քանի՛ եկեղեցիներ հիմնայատակ փլցուած են, որովհետեւ՝ անոնց հաստատութեանը համար հարկաւոր եղած հրամանը սովորական ճամբով՝ պաշտօնական աղբիւրէ չէր առնուած, ինչպէս կ'աւանդեն Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան, Հ. Ղ. Ինձիձեան, նաեւ շատ մը ուրիշ Յիշատակարաններ, զորս նշանակած եմ արդէն այս աշխատութեանս մէջ :

Եւ ահա թէ ինչո՞ւ, Սարգիս Դպիր այդ Ս. Խաչի համար դրած է թէ՛ «ի չգոյէ կերտեաց գայն Տ. Աբրահամ» զի այս բարեյիշատակ Բահանայն արդարեւ անգոյ բանի մը գոյութիւնը ստեղծելու յաջողած է կատարեալ եւ եղական ճարտիկութեամբ :

* * *

Տէր Աբրահամ Պալաքցի էր, ինչպէս կը գրէ Սարգիս Դպիր, որ ինքն ալ Պալաքցի էր ու իր թաղին «Մանկատուն» կոչուած Դպրոցին մէջ ուսուցիչ եղած է եւ միանգամայն ընդօրինակող կարգ մը գործերու, սրտնք իմ սեպհականութիւնս են այժմ :

Ընդունելու ենք, թէ Տէր Աբրահամ կանուխէն թողած է իւր ծննդավայրը ու փոխադրուած Իւսկիւտարի Սէլամիէ թաղը, եթէ ոչ՝ այդ եկեղեցասէր ու եկեղեցաշէն Բահանայն անպատճառ պիտի ուզէր իր մասնակցութիւնը բերել Պալաքի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն երկրորդ շինութեանը, որ տեղի ունեցած է 1692ին . այնու հանդերձ մեղադրելի չէ ըսել, թէ վերոյնշեալ ձեռագիր Աւետարանին նշանակած թուականէն առաջ գոյութիւն ունեցած ըլլայ Ս. Խաչ եկեղեցին . սակայն պայմանաւ՝ որ Տէր Աբրահամի տունին մէջ գաղանձածուկ էր այն ու անուանական :

Ինչպէս որ ալ եղած ըլլայ, Պալաքցի այդ Տէր Աբրահամ քահանայն երկու եւ կէս դարէ ի վեր յաւերժական երախտագիտութեան ամենալաւ զգացումներ ծնուցած է Սէլամիէ թաղին հին ու նոր, անցեալ ու ներկայ հոյսերունդներու սրտին մէջ :

Վախճանած է նա (թերեւս ի խոր ծերութեան), 1727 թուին . անոր խնկելի մար-

մինը ամփոփուած է եկեղեցւոյն բակը, ինչպէս կը գրէ Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան ըսելով՝ «Եւ գերեզման նորին է ի բակի եկեղեցւոյն, որ վախճանեալ քաղեցաւ անդ ի քուականին Հայոց ՌՃՀԶ (1727)» : Եւ այս տողերով՝ բացարձակապէս կը հերքուի Տէր Հմայեակ էքսէրձեանի այն պարբերութիւնը, թէ Տէր Աբրահամ նախապէս քաղուած ըլլայ Ազգ. Գերեզմանատունը եւ 1830ին անոր ոսկերտութիւնը փոխադրուած Ս. Խաչի ձախակողմեան (հիւսիսային ըսել կ'ուզէ) պարտէզը⁷⁴. Ոչ, Բահանայի գերեզման բանալ ու ոսկերտութիւնը փոխադրել այլուր, սրբանալ ու ոսկերտութիւնը կը համարուէր այդ հին ատենուց ի վեր . մանաւանդ որ չեմ կարծեր թէ կարելի ները . մանաւանդ որ չեմ կարծեր թէ կարելի ըլլար այդ ոսկերտութիւնը անեղծ գտնալ 103 տարի յետոյ (1727էն 1830) :

* * *

Տէր Աբրահամ կը հանգչի Ս. Խաչի եկեղեցւոյն հիւսիսային պարտէզին մէջ, ունի յատուկ շիրմաքար, որ կը կրէ խոշոր երկաթաուղի 19 տող Արձանագրութիւն մը, ամէն մէկ բառը կէտով մը զատուած, զոր անձամբ ընդօրինակած եմ ժամանակին, թէ եւ Տէր Հմայեակ ալ հրատարակեց յետոյ⁷⁵, բայց կարեւոր կը համարիմ գետեղել զայն Ծանօթագրութիւններու շարքին մէջ, աւելի ճիշդ գրութիւններու շարքին հրատարակուածը . Ահա կերպով քան արդէն հրատարակուածը . Ահա կասիկ այն .

«Որ վասն անչափ սիրով : Բոյն .
Բանդ կուսէ, առեր . մարմին .
Բեւեռեցար . կենաց : Փայտին
Շիրմա . այս . հարկ . հոգային
մեծաւ . պատուով . եղաւ . մարմին .
Աղաչանք . սրբոյ : Խաչ + ին
Մաղթեալ . ով . սուրբ . աստուած . ամ + ին
Թողուլ . զմեզ . յանձնաց սորին
Տր . Աբրահամ քահանային
Եկեղեցւոյն : յոյներախտին
Ձի . հոգով . չափ . այս . սուրբ խաչին
Աշխատ . եղև . լուսահոգին
Որք . ընթեմուք . յօթարագին
Լիով . սրտով . տուք . զողորմին
Հաղար . հարիւր . եօթանասին
Վեցուն . եղև . վախճան սորին
Որք . հանդիպիմք . ի տապանիս
Ասել պարտեմք . հայր մեր երկին :
Թվ . ՌՃՀԶ (1727)» :

⁷⁴ Յիշատակարան շնորհակալ Յոսիպեանի Ս. Խաչ եկեղեցւոյ, Կ. Պոլիս 1927, էջ 131 :
⁷⁵ Անդ, էջ 14—15—16 :

Տէր Աբրահամի աջակողմը եւ ճիշդ քովը թաղուած է, անոր կեանքի ընկեր ու աշխատակից Երեցուհին, որ մեռած է երեք տարի յետոյ 1730ին : Այն ալ ունի յատուկ շիրմա կրելով, երկաթազիր վերտառութիւն մը, որ դժբախտաբար տեղ տեղ աւրուած է, եւ զոր դժուարութեամբ կը ցած եմ կարդալ ու ընդօրինակել 1910ին :

Կը բաղանայ այն 15 տողէ, որոնց ամէն մէկ բառը կէտագրութեամբ բաժնուած է : Ահա կասիկ .

«Ով իսկուհի կին
Գայ ի դատաստ ծին
Ազգ . եւ աղինք . անդ ժողովին
Դատել . զաշխարհս . համայն իրին
Իրեցակինս . այս . աղախի + ն :
Միջնորդելով . զմայր . քոյին
Մի . յիշեցես . զմեզս . սորին
Այս խղճալի . Մարեամ + ին
Ունի . զմիջնորդ . սուրբ Խաչ քոյին
Որ տեղեալ իսկ երախտին
Ձի դասեցես . յաջակողմին
Ոչ . յիշելով . զյանցանս . ամին
Հանդիպելով . ի սոյն շիրմին
Ասել պարտեմք . ըզոգորմին
Հայկազունի Թվ . ՌՃՀԶ» (1730) :

Այս կրկին Տապանաքարերը ժամանակի ընթացքին հեռուցեալ անչքացած ըլլալուն, 1902ին զանոնք գեղեցիկ կերպով վերաշինել տուին Իւսկիւտար-Սելամսղցի Փանոսեան Պետրոս եւ կարապետ եղբայրները, եւ Տէր Աբրահամի գերեզմանին հարաւային էջին վրայ փորագրել տուին հետեւեալը .

«Կառուցաւ շիրմնս արդեամբ երկուց Խարազատաց Պետրոսի եւ կարապետի ի յիշատակ հօր իւրեանց Փանոս աղա Առաքելեանի . 1902» :

* * *

Աւելորդ չըլլայ միջանկեալ կերպով ըսել հոս, թէ երբ Տէր Աբրահամի հին շիրմաքարը նորին վրայ գետեղելու համար, գործաւորներ չողը կը քրքրէին, դուրս հանեցին երկու ունիւրը տապանաքարեր, որոնք անկասկած իրրեւ հիմ կամ ծածկոց դրուած պէտք է ըլլային գերեզմանին մէջ եւ անպատճառ փոխադրուած են հոն Ազգային Գերեզմանատունէն :

Ատոնք կանգուն ազուցուած կը մնան այժմ Ս. Խաչի ձախակողմեան պարտէզի որմին վրայ, Տէր Աբրահամի գլխին մօտ :

Մէկ հաստին վրայ կը կարդանք՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՐԱՍԵ-ԱՆ ՊՈՒՌՈՍԱԻ ԱՌԱՋՆՈՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՎԱՊԵՏԻՆ 70 ՀԱՅՐԵՆ ՈՐ ՓՈՒՆԵՑԱԻ Ի ԿԵԱՆՍ ԹՎ. ՌՃՀԳ ՀԱՅՐ ՄԵՐ (այսինքն 1724):

Իսկ միևսին վրայ՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԿՆ-ՑԻ ԹԵՐՃԻՄԱՆ ՄԱՀՏԵՍԻ ՊԱՂՏԱՍԱՐԻ ՈՐԳԻ ՆՈՐԱՐՈՑՍ ԿԱՐԱՊԵՏ ՁԵԼԷՊԻՆ ԹՎՆ ՌՃՁԳ (1735):

Այս երկրորդ տապանագրին թուականէն դատելի է՝ որ Տէր Աբրահամի եւ Երէցիկին շէրիմները բաւական ժամանակ յետոյ շինուած են, քանի՛ որ առաջինը վախճանած է 1727ին եւ երկրորդը 1730ին:

Տէր Աբրահամ ունեցած է չորս դաւակ, որոնց երկուքը քահանայ ձեռնադրուած են Տէր Նիկողոս եւ Տէր Գէորգ անուամբ 77:

Տէր Աբրահամը յաւերթ անմոռաց պահելու գեղեցիկ ու վեհ նպատակաւ, եկեղեցւոյ քահանայական դասին մէջ միշտ անոր անուանակից մը եղած է. այսպէս՝ Ս. Խաչ՝ հետզհետէ ունեցած է, Տ. Աբրահամ Բ. վախճանած 1762ին, Տէր Աբրահամ Գ. Գապասաքայեան († 1865), Տէր Աբրահամ Դ. Աճէմեան († 1872), Տէր Աբրահամ Ե. Մրմրեան († 1881), Տէր Աբրահամ Զ. Էպէեան այժմ Աւագերէց Մայր Եկեղեցւոյ:

* * *

Տէր Աբրահամ Ա. ի կառուցած եկեղեցին իր փայտաշէն վիճակին մէջ կը շարունակէ մնալ գրեթէ մօտ կէս Դար եւ 1727ին Ս. Կարապետ եկեղեցւոյն հետ միաժամանակ կը վերաշինուի 78, աւելի ընդարձակուելով, որու մասին Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան կը գրէ հետեւեալ տողերը.

76 Այս ներսէ վարդապետը որ Պալաթցի էր, մէկ տարի Կ. Պոլսոյ պատրիարք եղած է՝ 1704ին (Չամչեան Պատմ., Հատոր Գ., էջ 747) եւ յետոյ Առաջին թաղուած սեղանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ պարտէզը: Ասոր տապանագիրը հրատարակուած է նախ՝ Նիկոմեդիոյ Հայրենասէր անուն թերթին՝ 1852 Նոյեմբեր 15ի թուահամարին մէջ. յետոյ Բիւզանդիոն ալ գայն հրատարակեց 24 Գեկի. 1906ին: 1923ին եւ ալ հրատարակեցի զայն Տապանագիրք Պատրիարքացն Հայոց Կ. Պոլսոյ աշխատութեան մէջ (Բագմավեպ, 1923, էջ 169):

77 Հարկաւ արքունի ճարտարապետ Սարգիս Խաչիմայի Նիկոմեդիոյ կառարած է, ինչպէս քանիցս յայտնած եմ Մանթապարթիւններու մէջ (էջ 488 եւ 492):

«Եւ յետոյ ի հիմանէ շինեցաւ սա (Ս. Կարապետ) ընդ Եկեղեցւոյ Սրբոյ Խաչին ի ժամանակս Յովհաննու Պատրիարքին Կոլոտ կոչեցելոյ ի քուականին Հայոց ՌՃՀԶ (1727)»:

Ըսել է այս վերաշինութիւնը տեղի ունեցած է նոյն իսկ Տէր Աբրահամի մահուան տարին, եւ թերեւս սկսուած էր անոր կենդանութեանը, բայց մահը վրայ հասած:

Կոլոտի օրով շինուածը կը տեւէ մինչեւ 1830, ճիշդ մէկ Դար, յետոյ կը վերաշինուի այն փառաւոր, աւելի ընդարձակ ու քարուկիր, որ դարու մը հաստատութիւն է այսօր, ինչպէս կ'ուսուցանէ մեզ անոր աւագ դրան վերելը զրոջմուած ոսկեգրուազ Արձանագրութիւնը, որ է.

«Ողորմութեամբն Աստուծոյ չքնաղ կառուցաւ Եկեղեցիս Ս. Խաչի ի Պատրիարքութեան Տ. Կարապետ Արքեպիսկոպոսի յարդեանց Ազգիս Հայոց եւ ջանացողութեամբ Աստուածաւեր իշխանապետաց, որոց ամենեցուն ընդ մասնաւոր Հոգաբարձուի շինութեանս, տացէ Տէր գուարնաւոյ յերկուար Եկեղեցիին ընդ անմահից հրեշտակաց: Յամի Տեառն 1830 Սեպտեմբեր 22»:

Ս. Խաչի այս վերջին շինութեանը ճարտարապետ կ'ըլլայ մեծարուեստ Սերվէրեան Յովհաննէս ամիրայ 79, որ 1829ին շինած էր Խաչիկը Ս. Ստեփաննոսը, եւ 1835ին ալ շինեց Գուգիւնճուքի Ս. Լուսաւորիչը:

Բարեսէր անձեր առատօրէն կը սատարեն այս վերաշինութեան, այսինքն՝ Գրեկոր ամիրայ Պալեան, Միքայէլ ամիրայ Փիշմիշեան, Յարութիւն ամիրայ Նորատունկեան, Յարութիւն ամիրայ Պէդճեան եւ Ազնաւորեան եւ ուրիշներ, որոնց մանրամասն ցանկը գետնադած է Տէր Հմայեակ Քահանայ Էքսէրճեան իւր Յիշատակարանին մէջ 80:

* * *

Ս. Խաչ հոյակապ, ընդարձակ եկեղեցի մ'է. մայր տաճարին երկու կողմերը կը զրահան մեծ պահարաններ, որուն հարաւայինը նուիրուած է Ս. Երրարդութեան եւ հիւսիսայինը Ս. Յարութեան, ուր կը պահուի կենաց փայտի մասունքը, ամրակուտ յատուկ առուի մը մէջ, եւ ուր կը գտնուի նաեւ Մկրտութեան շքեղ աւագանը: Այս պահա-

79 Ծանօթութիւնք Ստամպոլոյ Պատմութեան, Հատոր Բ., էջ 430:
80 Յիշատակարան, էջ 24:

րանը իր յատուկ ծախքովը կառուցած է Պէդճեան Յարութիւն, ինչպէս կ'ուսանինք Դոան վերելը գետեղուած ոսկեգոծ Արձանագրութեան, որ է.

1830. ՇԻՆԵՑԱԻ ՄԱՏՈՒՌՈՍ ՅԱՆՈՒՆ ԵՒ Ի ՓԱՌՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԻԱՄՆԻ ՈՐԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՐԳԵԱՄԲ ԲՐԻՍՏՈՍԱԶՕՐ ՊԵՋՃԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ ԱՄԻՐԱՅԻ

Եկեղեցին ունի երկու ընդարձակ գաւիթ եւ մեծ վերնատուն մը, շուրջ բոլորը կը պատեն բաւականի լայն պարտէզներ, որոնց հիւսիսայինին մէջ, Տէր Աբրահամի Գերեզմանին սնարի կողմը շինուած կայ՝ մարմարեայ գեղեցիկ տաշտ մը, որուն վրայ բոլորապէս փորուած է.

«Շինեցաւ տաշտս ի յիշատակ հոգոյ Տէր ԱՐԲԱՀԱՄ ՔԱՀԱՆԱՅԻ Հիմնադրի սուրբ Եկեղեցւոյս. 1831 մայ 1»:

Հարաւային պարտէզին մէջ ալ կայ յարեւմտական շինուած տաշտ հետեւեալ Արձանագրութեամբ.

«Շինեցաւ տաշտս խաչահանգստի ի յիշատակ հոգւոյ տիրացու ՄԱՐՏԻՐՈՍ պանծալի սարկաւազի եւ բազմերախտ պաշտօնէի Սուրբ Խաչին, 1831 մայ 1 81»:

Այս Մարտիրոս Սարկաւազը մեծ ծառայութիւններ մատուցած է եկեղեցւոյն, եւ միանգամայն՝ թաղին կրթական գործին, ինչպէս պիտի տեսնենք քիչ յետոյ:

* * *

Եկեղեցին ունի ծառաղարը ընդարձակ բակ մը, ուր կը գտնուի բանկալը, ժամկոչներու խուցը, Բարոզչին եւ Քահանայներու սենեակները, թաղական խորհրդարանը եւ Դպրաց դասու սրահը. իսկ Արեւելեան դին՝ Տաճարի խորանին ետեւը շինուած է լայնարձակ գանձատունը, որուն ետեւն ալ կայ՝ պարտէզի պէս մեծ տեղ մը: Հոս լայնածաւալ հաստատ եղական ջրամբար մը, եկեղեցւոյ տանիքին անձրեւի ջուրերը հաւաքելու եւ բաշտանիքին պէտքերուն: Բաց աստի՛ Եկեղեցւոյ բակին մէջ ալ կայ մեծ ջրամբար մը որ շինուած է 1831ին ի յիշատակ Հոգւոց Սարգիս եւ Կարապետ ամիրայիցն Փիշմիշեան, ինչպէս կը կարդացուի վրան:

81 Տէր Աբրահամի եւ Մարտիրոս սարկաւազի նուիրուած այս տաշտերը շինած են Փիշմիշեան ընտանիքի անդամները, բակը գտնուած ջրամբարին հետ միաժամանակ:

Ս. Խաչ եկեղեցին փառաւոր տաճար մ'է, ինչպէս յայտնեցի արդէն. անոր արտաքինը չունի ճարտարապետական արուեստի շքեղութիւն, բայց ներքինը սիրուն է՝ հրապուշտութիւն, լուսաւոր:

Ունի սպիտակ մարմարեայ գեղեցիկաշէն սեղան-բեմ, որուն խորանը՝ պատկերի համար կը կրէր ճաճանչաւոր հնամենի մեծ շրջանակ մը, զոր 1892ին՝ չգիտեմ ի՞նչ թելադրութեամբ վար անուեցաւ եւ տեղը կաթողիկէի ձեւով նոր մը շինել տուաւ արքունի ճարտարապետ Բալուցի Ազնաւորեան Յովհաննէս Էֆէնտին, ի յիշատակ իւր վաղամեռ գաւկին թոքոսի:

Սեղանին ու դասին աջ ու ձախ կողմերը եւ որմերը, զարդարուած են Գրիստոսի Ծննդեան, Խաչելութեան, Թաղման եւ Յանուարի իւղաների հիանալի պատկերներով, լուծեան իւղաների հիանալի պատկերներով, մանաւանդ Գեթսեմանին, որոնց մեծ մասը զծած է նշանաւոր պատկերահան Պէհգատ Ումէտ, եւ իւր աղջիկը, եւ մէկ մասն ալ Իտալիայէն յատկապէս բերել տուած է Պէդճեան ամիրայ:

Եկեղեցւոյն կամարածեւ ընդարձակ ձեւով զարդարուած է առ կախ երեք խիստ զուներ զարդարուած է առ կախ երեք խիստ մեծ մոմակալ ջահերով, եւ շուրջանակի ալ փոքրերով, որոնք Եւրոպայէ բերուած են մասնաւոր յանձնարարութեամբ եւ տծական հանգիստաւոր օրերու միջոցին կը վառուին հիւսալի լուսարձակութեամբ:

Տաճարին մուտքը կը զրահէ աշտարակածեւ սիրուն գանդակատուն մը, որ շինուած է 1882ին եւ ունի հետեւեալ Արձանագրութիւնը.

ՇԻՆԵՑԱԻ ԶԱՆԳԱՎԱՏՈՒՆՍ ԱՐԳԵԱՄԲ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՆՎՀԱՏ ԱՇԵԱՏՈՒԹԵԱՄԲ Տ. ԳՐԻԿՈՐԻՍ Ս. ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱԼԵԱՌՃԵԱՆ ԳՈՐԻՍԻ Ս. ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱԼԵԱՌՃԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԳ ՏԱՐՈՆՈՅ ԵՒ ՔԱՐՈՂՈՅ Ս. ԵԿԵՂԵՑՈՅ Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՂԵՑԻՈՅ ՍԵՍԻ ԱԶԳԱՍԻՐԻ: 1882:

Գում-Գարուի Մայր Եկեղեցիէն յետոյ Իւսկիւտարի Ս. Խաչը համարուած էր Կ. Պոլսոյ երկրորդ նշանաւորը. մեծ ուխտատեղի էր եւ է, ունի եկեղեցական թանկագին ամենաշքեղ զգեստներ, որոնց շատերուն վրայ կը կարդացուի նուիրատուներու անունները, ինչպէս մանրամասն կը ներկայացնէ Տէր Էքսէրճեան Քահանայ, վերոյիշեալ իւր հրատարակութեանը մէջ (էջ 29—32):

* * *

